ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ հրաժարական տվեց Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը.**

1) 1920 թ· մայիսի 5–ին
2) 1920 թ· նոյեմբերի 25–ին
3) 1920 թ· մայիսի 10–ին
4) 1920 թ· մայիսի 13–ին

2 **Ե՞րբ են Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամները մշակել արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրությունը.**

1) 1863 թ.
2) 1862 թ.
3) 1860 թ.
4) 1857 թ.

3 **Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու շարժումը սկսվեց.**

1) 1985 թ. մարտին
2) 1986 թ. դեկտեմբերին
3) 1988 թ. փետրվարին
4) 1989 թ. մարտին

4 **Ե՞րբ է անգլիական «Արևելահնդկական ընկերությունը» պայմանագիր կնքել հայ վաճառականների հետ.**

1) 1690 թ.
2) 1688 թ.
3) 1683 թ.
4) 1699 թ.

5 **Ե՞րբ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.**

1) Ք. ա. մոտ 175 թ.
2) Ք. ա. մոտ 165 թ.
3) Ք. ա. մոտ 160 թ.
4) Ք. ա. մոտ 185 թ.

6 **Ե՞րբ է ստեղծվել մանրանկարներով զարդարված և մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը.**

1) 851 թ.
2) 961 թ.
3) 989 թ.
4) 1001 թ.

7 **Ե՞րբ է իշխել Կոստանդին I–ը.**

1) 1095–1100 թթ.
2) 1100–1129 թթ.
3) 1129–1137 թթ.
4) 1082–1117 թթ.

8 **Ե՞րբ է սկսվել արևմտահայության զանգվածային վերաբնակեցումը ռուսական տերությանն անցած տարածքներ.**

1) 1833 թ
2) 1831 թ.
3) 1830 թ.
4) 1829 թ.

9 **Ո՞վ է հայկական առաջին դատաստանագրքի ստեղծողը.**

1) Դավիթ Ալավկաորդին
2) Սմբատ Գունդստաբլը
3) Ներսես Շնորհալին
4) Մխիթար Գոշը

10 **Ո՞վ է 1905 թ. Բաքվի ինքնապաշտպանությունից հետո ղեկավարել Երևանի նահանգի ինքնապաշտպանությունը.**

1) Քեռին
2) Վարդանը
3) Արմեն Գարոն
4) Նիկոլ Դումանը

11 **Վասակ սպարապետը որտե՞ղ է վերաթաղել պարսիկներից ազատած հայ Արշակունի թագավորների աճյունները.**

1) Անգեղում
2) Աղձքում
3) Կուաշում
4) Անիում

12 **Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ձգվող լեռնաշղթան.**

1) Հայկական Տավրոս
2) Հայկական Պար
3) Գեղամա
4) Արցախի

13 **Ո՞վ էր Հայաստանի առաջին հանրապետությունում հանրային կրթության և արվեստի նախարարը.**

1) Գուրգեն Էդիլյանը
2) Նիկոլ Աղբալյանը
3) Յու. Ղամբարյանը
4) Լևոն Շանթը

14 **Քանի՞ սեպագիր արձանագրություն է պահպանվել Վանի թագավորության շրջանից.**

1) ավելի քան 1000
2) ավելի քան 1500
3) ավելի քան 2000
4) ավելի քան 2500

15 **Հայկական դիվիզիաներից ո՞րն է առաջինը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մեկնել ռազմաճակատ.**

1) 89–րդ
2) 408–րդ
3) 390–րդ
4) 76–րդ

16 **Ո՞ր պատմիչն է վկայել, որ Տիգրանակերտում եղել է թատրոն.**

1) Տակիտոսը
2) Պոլիբիոսը
3) Դիոն Կասիոսը
4) Պլուտարքոսը

17 **Ո՞ր արքայի մասին է պատմիչի ստորև բերվող վկայությունը.**

«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ …և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

1) Արտաշես I–ի
2) Երվանդ Սակավակյացի
3) Տիգրան I Երվանդյանի
4) Տրդատ III Արշակունու

18 **Ո՞վ է ստորև մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էր անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլև սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»:

1) Մկրտիչ Խրիմյան
2) Անդրանիկ Օզանյան
3) Հրայր Դժոխք
4) Հովհաննես Թումանյան

19 **1917 թ. արևմտահայ զորաբաժինը կյանքի կոչելու համար ստեղծված գործադիր մարմինը կոչվել է՝**

1) Հայաստանի ապահովության խորհուրդ
2) Հայ զինվորական միություն
3) Հայոց ազգային խորհուրդ
4) Կովկասի գործերի արտակարգ կոմիսարիատ

20 **Միջնադարում ի՞նչ անունով էր հայտնի փիլիսոփայությունը.**

1) իմաստասիրություն
2) ճարտասանություն
3) աստվածաբանություն
4) բնագիտություն

21 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները.**

ա. Ս. Կիրովի սպանությունը պատճառ հանդիսացավ տրոցկիստների ազատ գործունեության համար:
բ. 1949 թ. Հայաստանից բոլոր սփյուռքահայերի՝ Ալթայի երկրամաս արտաքսվելու իրական պատճառը նրանց անդամակցությունն էր «Դաշնակցություն» կուսակցությանը:
գ. 1925 թ. խորհրդա–թուրքական պայմանագրի դենոնսացիան պայմանավորված էր Երկրորդ աշխարհամարտում Թուրքիայի՝ Գերմանիային փաստացի դաշնակցելով:
դ. Ա. Խանփերյանցի ձերբակալման պատճառը դավաճանությունն էր հայրենիքին:
ե. Սառը պատերազմը պատճառ հանդիսացավ, որ ԽՍՀՄ ղեկավարությունը հրաժարվի Թուրքիայից հայկական հողերի պահանջներից:

1) ա, գ
2) ա, ե
3) բ, դ
4) գ, ե

22 **Հայաստանի Հանրապետությունը կարողացավ իրավական (դե յուրե) ճանաչում ստանալ Անտանտի երկրների կողմից և մասնակցել հաշտության խորհրդաժողովին, որովհետև՝**

1) այդ մասին տերությունների ղեկավարները պայմանավորվել էին Բեռլինի վեհաժողովում
2) Հայաստանի Հանրապետությունը այդ իրավունքը ստացել էր Ազգերի լիգայի կողմից
3) նորահռչակ հայկական պետության զինված ուժերը պատերազմում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ
4) նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ

23 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. մամլուքների կողմից Հռոմկլայի ավերումն ու թալանը
բ. Կոստանդին թագավորահոր մեկնումը մոնղոլների հրամանատարի մոտ
գ. Կիլիկյան հայոց թագավորների և 40 իշխանների սպանությունը մոնղոլների կողմից
դ. Ռայմոնդ–Ռուբենին Կիլիկիայի թագաժառանգ հռչակելը
ե. հայոց գահը Հեթումյաններին ազգակից Նղրեցիներին հանձնելը

1) բ, դ, ա, ե, գ
2) բ, գ, դ, ա, ե
3) ա, գ, դ, բ, ե
4) դ, բ, ա, գ, ե

24 **Ստորև բերված պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Հրանտ Դինքի սպանությունը
բ. Լաչինի ազատագրումը
գ. «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը
դ. Արթուր Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ
ե. հայ ազատամարտիկների կողմից Կրկժանի ազատագրումը
զ. եռաստիճան դատական համակարգի ներդրումը ՀՀ–ում

1) ե
2) դ
3) զ
4) ա

25 **Կատարել համապատասխանեցում.**

Հեղինակ	Ստեղծագործություն
1) Ստեփանոս Պալասանյան	ա. «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում»
2) Մաղաքիա Օրմանյան	բ. «Ազգապատում»
3) Անտոն Գարագաշյան	գ. «Քննական պատմութիւն Հայոց»
4) Ալեքսանդր Երիցյան	դ. «Պատմութիւն Հայոց»
	ե. «Հայոց պատմության տեսություն»

1) 1–դ, 2–բ, 3–ե, 4–գ
2) 1–ե, 2–բ, 3–գ, 4–ա
3) 1–դ, 2–բ, 3–գ, 4–ա
4) 1–բ, 2–ե, 3–գ, 4–դ

26 **Ենթակա թագավորությունների անվանումները համապատասխանեցնել դրանց հիմնադիրների անուններին.**

1) Տաշիր–Զորագետ	ա. Սմբատ
2) Սյունիք	բ. Գագիկ
3) Վասպուրական	գ. Գուրգեն
4) Վանանդ	դ. Մուշեղ
	ե. Դավիթ

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
2) 1–ա, 2–դ, 3–գ, 4–բ
3) 1–ե, 2–ա, 3–բ, 4–գ
4) 1–ե, 2–գ, 3–դ, 4–ա

27 **Հայաստանում ե՞րբ է սկսվել հելլենիստական ժամանակաշրջանը և որքա՞ն է տևել.**

1) Ք. ա. II հազարամյակում, տևել է 4 դար
2) Ք. ա. IV դարից, տևել է 2 դար
3) Ք. ա. III դարից, տևել է 6 դար
4) Ք. ա. II դարից, տևել է 6 դար

28 **Ե՞րբ են հայ–վրացական ուժերն ազատագրել Ամբերդը.**

1) 1203 թ.
2) 1196 թ.
3) 1206 թ.
4) 1199 թ.

29 **Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում «Նաիրի» երկրանունը.**

1) Քրիստոսից առաջ XI դարում
2) Քրիստոսից առաջ XII դարում
3) Քրիստոսից առաջ XIII դարում
4) Քրիստոսից առաջ XIV դարում

30 **Ո՞վ է XIX դարի առաջին ռուս–պարսկական պատերազմի ժամանակ պարգևատրվել Գեորգիևյան IV աստիճանի խաչով.**

1) Մարտիրոս Վեքիլյանը
2) Ռոստոմ բեկը
3) Գրիգոր Մանուչարյանը
4) Հակոբ Հարությունյանը

31 **Ու՞մ հրամանով սպանվեց Աղասի Խանջյանը.**

1) Լ. Տրոցկու
2) Լ. Կամենևի
3) Բերիայի
4) Գ. Զինովևի

32 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

«Ժխտել՝ նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:

1) Էլի Վիզել
2) Ֆրիտյոֆ Նանսեն
3) Անդրեյ Սախարով
4) Առնոլդ Թոյնբի

33 **Ընտրել հայոց թագավորի խոսքի ճիշտ շարունակությունը.**

«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը».

1) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես դուրս բերել Հայոց տանից»
2) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես հեռացրել Հայոց տանից»
3) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես կալանավորել»
4) «որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»

34 **Խալդյան դարպասը հետագայում ի՞նչ է կոչել ժողովուրդը.**

1) Խալդիի դուռ
2) Մենուայի դուռ
3) Սրբազան մուտք
4) Միհերի դուռ

35 **Ինչո՞ւ պարսից զորքը 484 թ. Հայաստանից արագորեն վերադարձավ Պարսկաստան.**

1) Որովհետև պարսից զորքերը Միջին Ասիայում պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան սպանվել էր:
2) Որովհետև պարսից զորքերը Ճարմանայի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո շարժվելու էին դեպի Բյուզանդիա:
3) Որովհետև պարսից զորքերը Ճորա պահակի մոտ պարտություն էին կրել հեփթաղներից, իսկ Պերոզ արքան գերի էր ընկել:
4) Որովհետև պարսից զորքերը Ներսեհապատի ճակատամարտում պարտություն էին կրել և մեծ քանակությամբ զոհեր տվել:

36 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սարդուրի III–ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
բ. հայկական նոր թագավորության հռչակումը Պարույր Հայկազունու գլխավորությամբ
գ. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
դ. Թիգլաթպալասար III–ի արշավանքը դեպի Տուշպա

1) դ, գ, բ, ա
2) գ, դ, ա, բ
3) գ, ա, դ, բ
4) բ, գ, դ, ա

37 **Պայմանագրերը դասավորել ըստ կնքման ժամանակագրական հաջորդականության.**

ա. Գեորգիևսկի
բ. Սան Ստեֆանոյի
գ. Թուրքմենչայի
դ. Բուխարեստի
ե. Գյուլիստանի
զ. Ադրիանուպոլսի

1) ա, դ, ե, գ, զ, բ
2) դ, ե, գ, զ, բ, ա
3) ա, ե, դ, զ, գ, բ
4) ե, ա, գ, զ, բ, դ

38 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	Ստեղծագործություն
1) Սարգիս Մուրադյան	ա. «Ալեքսանդր Թամանյան»
2) Նիկողայոս Նիկողոսյան	բ. «Կոմիտասի վերջին գիշերը»
3) Արտաշես Հովսեփյան	գ. «Սպասում»
4) Մինաս Ավետիսյան	դ. «Միքայել Նալբանդյան»
	ե. «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից»

1) 1–ա, 2–բ, 3–դ, 4–ե
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–ե
3) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
4) 1–ե, 2–դ, 3–ա, 4–բ

39 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշում նէպը.**

1) աշխուժացան ապրանքադրամական հարաբերությունները քաղաքի և գյուղի միջև
2) պարենհարկի փոխարեն մտցվեց պարենմասնատրումը
3) արգելվեց դրամական աշխատավարձի կիրառումը
4) վերականգնվեց ազատ առևտուրը
5) խոշոր և միջին բոլոր ձեռնարկությունները սեփականաշնորհվեցին

40 **Թվարկվածներից որո՞նք Արտաշես I–ի բարեփոխումների հետևանքներ չեն.**

1) Գյուղական համայնքները հետ ստացան ագարակատերերի կողմից զավթված հողերը:
2) Պահպանվեց համայնքի հողային սեփականությունը:
3) Կարգավորվեցին արքունի գործակալությունները:
4) Պահպանվեց նախկին վարչական բաժանումը:
5) Օրինականացվեցին ագարակատերերի՝ մինչ այդ կատարած հողային զավթումները:
6) Զորքը բաժանվեց 4 զորավարությունների:

41 **Թվարկվածներից որո՞նք 1914 թ. ռուս–թուրքական համաձայնագրի պայմաններից չեն.**

1) Ստեղծված վարչական միավորները կառավարվելու էին երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների կողմից:
2) Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվելու էր հատուկ գեներալ–նահանգապետություն:
3) Տեսուչներն իրավունք էին ստանում նշանակելու և պաշտոնանկ անելու ապաշնորհ կամ օրինազանց պաշտոնյաներին:
4) Հողային հարցերը պետք է վճռվեին տեսուչի անմիջական վերահսկողությամբ:
5) Ռուսաստանի գրաված տարածքում ստեղծված երեք հայկական մարզերը կառավարվելու էին գեներալ–կոմիսարի և նրա երկու օգնականների միջոցով:
6) Յոթ նահանգներից՝ Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա, և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, ձևավորվելու էր երկու վարչական միավոր:

42 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Միլանի կայսերական հրովարտակի ընդունումը
2) Մծբինի 40–ամյա պայմանագրի խախտումը Շապուհ II–ի կողմից
3) Առաջին տիեզերական ժողովի գումարումը
4) մազքութների թագավոր Սանեսանի զորքի ներխուժումը Հայաստան
5) Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների նահատակվելը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի սկիզբը
2) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
3) Ազգային միացյալ կուսակցության ղեկավար մարմնի՝ խորհրդի ձևավորումը
4) Արկադի Վոլսկու նշանակվելը ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
5) Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը

44 **Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթների բարձրությունները համապատասխանեցնել լեռնագագաթների անվանումներին.**

ա. Կապուտջուղ
բ. Արագած
գ. Մասիս
դ. Սիփան
ե. Սիս

1) 4096 մ
2) 3925 մ
3) 3975 մ
4) 3906 մ
5) 4434 մ
6) 5165 մ

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ հանել 80–100 հազար զորք:
2) Կիլիկյան Հայաստանի մշտական բանակի կազմակերպումը սկսվել է Լևոն II–ի օրոք:
3) Կիլիկյան Հայաստանի բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ սպասալարի դերը:
4) Կիլիկյան Հայաստանում կանցլերի պաշտոնը սովորաբար տրվում էր Սսի արքեպիսկոպոսին կամ կրթված և լեզուներ իմացող այլ հոգևորականի:
5) Սպարապետությունը Կիլիկյան Հայաստանում Ռուբինյանների ժառանգական պաշտոնն էր:
6) Կիլիկյան Հայաստանի կանոնավոր բանակի հիմնական կորիզը հեծելազորն էր:

Բ մակարդակ

46 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ իրավապաշտպանին.**

ա. պայքարում էր բնության և շրջակա միջավայրի պաշտպանության համար
բ. անընդունելի էր համարում խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները
գ. խորհրդային իշխանություններից պահանջում էր պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը
դ. խորհրդային իշխանության դեմ զինված պայքար էր մղում
ե. պայքարում էր մարդու իրավունքների պաշտպանության համար

1) գ, դ
2) բ, ե
3) գ, ե
4) ա, դ

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականների մշակած ազատագրական նախագծի համաձայն՝ ռուսական կայսր Նիկոլայ I–ը կրելու էր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը:
բ. Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և 12 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Երևանի նահանգ:
գ. Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի (Էրզրում) բանալի»:
դ. Սյունիքում կազմավորված կիսանկախ իշխանությունները կոչվել են սղնախներ:
ե. Ռուսաստանի կազմում Շամքոր կենտրոնով 1840 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ:

1) ա, ե
2) գ, ե
3) բ, դ
4) ա, գ

48 **Թվարկվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ.**

ա. Հիմնադրվեց քիմիական արդյունաբերությունը:
բ. Գյումրին դարձավ պղնձարդյունաբերության կենտրոն:
գ. Երկրորդ հնգամյակի տարիներին կառուցվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն:
դ. Առաջին երկու հնգամյակների տարիներին կառուցվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
ե. Ղափանը դարձավ ոսկու արդյունահանման կենտրոն:
զ. Բանվորների թիվն աճեց և 1940 թ. կազմեց 500 000:
է. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:

1) բ, ե, զ
2) բ, դ, է
3) ա, դ, է
4) ա, գ, ե

49 **Թվարկվածներից որո՞նք են Գագիկ I Բագրատունու գործունեության հետևանքներից.**

ա. Անիի թագավորությանը միացվեցին Դվինի և Ատրպատականի ամիրայությունները:
բ. Հայկական զորքը նրա օրոք դարձավ հզոր ուժ, և հետևողականորեն ընդարձակվեցին պետության սահմանները:
գ. Ճնշվեց Տայքի Դավիթ Կյուրապաղատի անհնազանդությունը:
դ. Կառուցվեց Անիի երկրորդ պարիսպների գիծը:
ե. Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության ու ծաղկման գագաթնակետին:
զ. Գագիկ I–ի կինը՝ Կատրամիդե թագուհին, Զորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանքերը:
է. Հայկական տարածքների մեծ մասը փաստորեն միավորվեց Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:

1) բ, ե, է
2) ա, գ, դ
3) գ, ե, զ
4) բ, գ, է

50 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խանասորի արշավանքը
բ. հայերի կոտորածն Ադանայում
գ. Պետոյի և Մարտիկի զոհվելը
դ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական ժողովը Էջմիածնում
ե. Վանի հերոսամարտը՝ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ
զ. հայ–թաթարական ընդհարումների ավարտը
է. Զեյթունի ապստամբությունը՝ Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
ը. Սասունի ինքնապաշտպանությունը՝ Անդրանիկի գլխավորությամբ
թ. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ղեկավարությամբ
ժ. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը

1) բ, դ, զ, ը, ժ, ա, գ, ե, է, թ
2) ժ, ե, զ, դ, ա, գ, բ, թ, ը, է
3) թ, է, բ, գ, ա, դ, ը, ե, ժ, զ
4) թ, է, ե, գ, ա, ժ, ը, դ, զ, բ

51 **Թվարկված հայոց գահակալներից ո՞վ է թագավորել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Վաղարշ I
բ. Խոսրով I
գ. Որմիզդ–Արտաշիր
դ. Սանատրուկ
ե. Տրդատ I
զ. Բակուր Արշակունի
է. Տրդատ III
ը. Խոսրով II
թ. Վաղարշ II
ժ. Տրդատ II

1) բ
2) թ
3) զ
4) է

52 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կ. Պոլսի հայոց պատրիարքության ստեղծումը
բ. Նոր Ջուղայում հայկական տպարանի ստեղծումը
գ. Զաքարիա կաթողիկոսի եղբորորդի Սմբատի օծումը հայոց թագավոր
դ. Լվովի տպարանի հիմնադրումը
ե. Կասրե–Շիրինի պայմանագրի կնքումը
զ. օսմանյան զորքերի արշավանքը Սեֆյան Իրանի դեմ Սելիմ Ահեղ սուլթանի գլխավորությամբ
է. Երևանի գրավումը շահ Աբասի զորքերի կողմից

1) ա, զ, գ, է, դ, ե, բ
2) ա, գ, զ, է, դ, բ, ե
3) գ, դ, ե, բ, է, ա, զ
4) գ, ա, զ, է, դ, ե, բ

53 **Հայոց աստվածների անունները համապատասխանեցնել հունական աստվածների անուններին՝ հելլենիստական դարաշրջանում ընդունված համադրությամբ.**

1) Ափրոդիտե	ա. Արեգ–Միհր
2) Արտեմիս	բ. Արամազդ
3) Հերակլես	գ. Աստղիկ
4) Հելիոս	դ. Անահիտ
5) Զևս	ե. Նանե
6) Ապոլոն	զ. Վահագն
	է. Տիր

1) 1–դ, 2–ե, 3–ա, 4–զ, 5–բ, 6–է
2) 1–գ, 2–ե, 3–զ, 4–ա, 5–է, 6–բ
3) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5–բ, 6–է
4) 1–գ, 2–դ, 3–է, 4–ա, 5–բ, 6–զ

54 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Մուսավաթական Ադրբեջանը, ոգևորվելով Անդրկովկասում Թուրքիայի նվաճողական քաղաքականությունից, հավակնություններ դրսևորեց հայկական տարածքներ Շարուր–Դարալագյազի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Կարսի և Լոռու նկատմամբ:
բ. Բաթումի պայմանագրով հայկական կողմը պետք է լուծարեր հայկական բոլոր զորամասերը:
գ. Թուրքական զորքերի հարձակումը դեպի Բաքու սկսվեց 1918 թ. մայիսին, սակայն մինչև հոկտեմբեր ամիսը նրանց չհաջողվեց գրավել քաղաքը:
դ. Գերմանիան դրականորեն վերաբերվեց Բաթումի պայմանագիրը վերանայելու հարցին, որովհետև նա ցանկանում էր Անդրկովկասը պահել իր ազդեցության ոլորտում:
ե. Հայ–վրացական հաշտության համաձայն՝ «Լոռու չեզոք գոտում» տեղակայվեցին անգլիական զորամասեր:
զ. «Լոռու չեզոք գոտում» սահմանվեց հատուկ կառավարում, որն իրականացվելու էր Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ–նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ:
է. Բաթումի պայմանագրի համաձայն՝ ՀՀ–ն պահպանեց Առանձին հայկական կորպուսը:
ը. Սևրի պայմանագրի համաձայն՝ հայ–վրացական սահմանը որոշելու էր ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնը:
թ. Թուրք–հայկական պատերազմի ժամանակ Թիֆլիսում կնքված հայ–վրացական համաձայնագրով երեք ամսով «Լոռու չեզոք գոտի» մտցվեցին վրացական զորքեր:

1) ա, գ, ը
2) ե, զ, թ
3) դ, զ, թ
4) բ, դ, է

55 **Տրվածներից առանձնացնել երեք կետ, որոնք Շահամիր Շահամիրյանի կազմած հայկական պետականության վերականգնման նախագծի հոդվածներից չեն.**

ա. Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը հռչակել հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
բ. Հայաստանում 20 տարի ժամանակով տեղակայել 6–հազարանոց ռուսական զորք:
գ. Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
դ. Հայաստանի և Ռուսաստանի միջև սահմանել ազատ երթևեկություն:
ե. Հայոց թագավորին ընտրել ռուսական կայսրի կողմից, իսկ այնուհետև օծել Էջմիածնում:
զ. Պետերբուրգում ունենալ Հայաստանի կառավարության դեսպան:
է. Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին:

1) գ, ե, է
2) ա, գ, է
3) բ, ե, զ
4) գ, դ, զ

56 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Ք. ա. 716 թ. աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին քոչվոր կիմերների ցեղերը, որի արդյունքում Ռուսա I–ը անհաջողություններ կրեց, դրանից էլ օգտվելով՝ Սարգոն II–ը հարձակվեց Վանի թագավորության վրա:
բ. Հայ–մակեդոնական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
գ. Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգման համար պայքարն ավարտվեց տերության տրոհմամբ:
դ Երվանդ I–ի՝ Ք. ա. 360–ական թթ. սկսած հակապարսկական ապստամբությունն ավարտվեց պարտությամբ:
ե. Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հարավային Միջագետքում:
զ. Արածանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:
է. Տիգրանակերտի ճակատամարտում պարթևական ուժերի նահանջը նպաստեց Տիգրանակերտի գրավմանը հռոմեացիների կողմից:

1) բ, դ, ե
2) ա, դ, է
3) ա, գ, զ
4) բ, դ, զ

57 **Կատարել համապատասխանեցում**

Ղեկավար	Ինքնապաշտպանության վայր
1) Արմենակ Եկարյան	ա. Մուսա լեռ (Սուետիա)
2) Հայկակ Կոսոյան	բ. Շատախ
3) Հակոբ Կոտոյան	գ. Վան՝ Քաղաքամեջ
4) Ղուկաս Տեովլեթյան	դ. Ուրֆա
5) Տիգրան Անդրեասյան	ե. Շապին Կարահիսար
6) Մկրտիչ Յոթնեղբայրյան	զ. Վան՝ Այգեստան
	է. Մուշ

1) 1–զ, 2–գ, 3–է, 4–ե, 5–ա, 6–դ
2) 1–գ, 2–ա, 3–է, 4–զ, 5–բ, 6–դ
3) 1–գ, 2–զ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ
4) 1–դ, 2–է, 3–գ, 4–ե, 5–ա, 6–բ

58 **Ընտրել երեք սխալ պնդումները**

ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
բ. Հայաստանի չափազանց բարենպաստ պայմաններն ու աշխարհաքաղաքական դիրքը անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր պետությունների, ժողովուրդների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:
գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դ. խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ դուրս է գալիս այդ երկրի թագավոր Խուկանան:
դ. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:
ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:
զ. Հայերի օգտագործած արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգերից առավել նշանավոր են Հայոց մեծ թվականը, Հայոց միջին թվականը և Հայոց փոքր թվականը:
է. Ըստ Մովսես Խորենացու՝ Տիգրան Մեծը, ի թիվս բազում այլ բարեփոխումների, բարեկարգել ու ճշգրտել է օրացույցը:
ը. Ասուրա–բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. IV դարի առաջին կեսը:

1) դ, ե, ը
2) բ, զ, է
3) ա, գ, ը
4) գ, զ, է

59 **Թվարկված պայմաններից որո՞նք են ճիշտ արտահայտում Դամասկոսում կնքված հայ–արաբական դաշնագրի բովանդակությունը.**

ա. Հայաստանի ամրոցներում արաբները տեղակայելու էին իրենց կայազորները:
բ. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 25–հազարանոց այրուձի:
դ. Խալիֆայությունն առնվազն տասը տարի Հայաստանից հարկ չէր գանձելու:
ե. Հայաստանում գանձվող հարկի հաշվին պահվող հայոց այրուձին պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:
զ. Պարսիկների ներխուժման դեպքում նույնպես խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
է. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:

1) ա, գ, է
2) բ, ե, է
3) բ, դ, զ
4) ա, ե, զ

60 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
2) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
3) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
4) Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով:
5) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:
6) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրը անվանել են «ամոթալի»:
7) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:

61 **Թվարկվածներից որո՞նք են արդի կրթամշակութային կյանքի իրական արդյունքներ.**

1) Հայաստանում իր գործունեությունը վերսկսեց աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը:
2) Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ 1993 թ. Երևանում բացվեց Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)՝ սեփական պատկերասրահով:
3) Գևորգ Գևորգյանը ստեղծեց Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում:
4) Լորիս Ճգնավորյանը 2001 թ. ստանձնեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը:
5) Երևանում կանգնեցվել է Արա Շիրազի «Հովհաննես Բաղրամյան» ձիարձանը:
6) 1990–ական թթ. ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը դարձավ դիմանկարը:
7) Գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն մտցրեց «Մկրտչյան» մասնավոր պատկերասրահը:

62 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ամբողջովին փոխվեց Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը:
2) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանը միացավ Անտանտին:
3) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ռուսական զորքերը մնացին Արևմտյան Հայաստանում:
4) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանում ձևավորվեց իշխանության գործադիր նոր մարմին՝ Ժողկոմխորհը:
5) Փետրվարյան հեղափոխության շնորհիվ Ռուսաստանում միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության:
6) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատը:
7) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանության եկան բոլշևիկները:

63 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Մլեհի իշխանության սկզբում Դաշտային Կիլիկիան կրկին Բյուզանդիայի տիրապետության տակ էր. միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին խաչակիրներին։
2) Մլեհը խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը։
3) Մլեհը խաչակիրներից ազատագրեց Ադանա, Մսիս և Անարզաբա քաղաքները։
4) Հարևան Եգիպտոսի և Իրանի հետ գործակցելու քայլերից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին Մլեհին։
5) Մլեհի վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը։
6) Մլեհը բարեկարգեց Սիս քաղաքը և դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք։
7) Մլեհը դաշնակցեց Տրիպոլիի ամիրայի հետ։

64 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Ք. ա. 522–521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ Կամբիզը Հյուսիսային Միջագետքում պարտություն կրեց հայերից։
2) Մինչև Ք. ա. 331 թ. Հայաստանը մնաց Աքեմենյան տերության կազմում՝ որպես սատրապություն։
3) Դարեհ III Կոդոմանոսը ողջ Աքեմենյան տերության տիրակալ դարձավ Ք. ա. 336 թ.։
4) Ք. ա. 331 թ. Հայաստանի անկախությունը վերականգնեցին Երվանդ (Օրոնտես) III–ը՝ Մեծ Հայքում, Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում։
5) Աքեմենյան արքա Արտաքսերքսես III–ի դեմ Կյուրոս Կրտսերը ապստամբել է Ք. ա. 360 թ.։
6) «Անաբասիս» թարգմանաբար նշանակում է «Տասը հազարի նահանջը»։
7) Աքեմենյան տերությունում վարչական միավորները կոչվում էին ստրատեգիաներ։
8) Դարեհ I–ի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը գլխավորում էր հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին։

65 **Թվարկվածներից ո՞ր երկուսն են խախտում իրադարձությունների տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը
2) Ա. Սպենդիարյանի տեղափոխվելը Ղրիմից Հայաստան
3) Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բացումը
4) Լենինականի պետական թատրոնի հիմնադրումը
5) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
6) ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը
7) Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության ստեղծումը
8) Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը
9) Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ղարաքիլիսայի հերոսամարտի սկիզբը
2) Բաշ Ապարանի հերոսամարտի սկիզբը
3) Արամ Մանուկյանի հաստատվելը որպես Երևանի նահանգի դիկտատոր
4) Սոգյութլուի (Սառնաղբյուրի) հաղթական կռիվների սկիզբը
5) Ալեքսանդրապոլում հայ ազգային–քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը
6) Տարոնի 500 կամավորների ուժերով Ներքին Թալինի բերդի գրավումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Սասանյան արքայատոհմի հիմնումը
2) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
3) Պետոսի ուղարկվելը Արևելք
4) հռոմեա–պոնտական պատերազմների ավարտը
5) Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը Պարթևստանում
6) Տիգրան Մեծի և Գոդերձ II–ի միջև պայմանագրի կնքումը

68 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Արամ Մանուկյան
բ. Ավետիք Սահակյան
գ. Համո Օհանջանյան
դ. Հովհաննես Հախվերդյան
ե. Ավետիս Ահարոնյան
զ. Սարգիս Կասյան

1) ՀՀ խորհրդի նախագահ
2) ՀՀ զինվորական նախարար
3) Ազգային պատվիրակության ղեկավար
4) ՀՀ ներքին գործերի նախարար
5) ՀՀ վարչապետ
6) Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
7) Հայաստանի ՌՀԿ նախագահ

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 **Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

ա. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը
բ. Ավարայրի ճակատամարտը
գ. Ներսեհապատի ճակատամարտը
դ. Արշակունյաց արքայատոհմի անկումը
ե. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովի գումարումը
զ. Զվարթնոցի տաճարի կառուցումը

1) Ներսես Բ Բագրևանդացի
2) Սահակ Պարթև
3) Կոմիտաս Մամիկոնյան
4) Հովհաննես Ա Մանդակունի
5) Հովսեփ Ա Վայոցձորցի
6) Ներսես Գ Տայեցի
7) Հովհաննես Բ Գաբեղենացի

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Վիեննայի արքունիքը Օրուն համաձայնություն չտվեց օգնելու Հայաստանի ազատագրման գործում:
2) Խամսայի մելիքությունների կառավարիչ Դիզակի մելիք Եգանը ստացել էր նաև խանի տիտղոս:
3) Մելիքջան Մելիք–Շահնազարյանցը անկախ է ճանաչվել Երևանի խանից և նշանակվել Արարատյան երկրի քալանթար:
4) Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունները պահպանել էին նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները:
5) XVIII դարի սկզբին Ռուսաստանը պայքար էր մղում Բալթիկ, Սև և Միջերկրական ծովերի ափերին հաստատվելու համար:
6) Ֆլորենցիայում դուքսը Օրուն խոստացավ զորք տրամադրել՝ Հայաստանն ազատագրելու նպատակով: